Օրինակ 1

Հասմիկն ու Լիլիթը թարգմանիչներ են, և երկուսն էլ տիրապետում են ֆրանսերենի ու իտալերենի: Սակայն նրանց արդյունավետությունն էականորեն տարբերվում է: Հասմիկը 5 էջանոց ֆրանսերեն տեքստը կարողանում է թարգմանել հայերեն 30 րոպեում, իսկ 5 էջանոց իտալերեն տեքստը՝ 60 րոպեում: Լիլիթը կարողանում է 5 էջանոց ֆրանսերեն տեքստը թարգմանել հայերեն 60 րոպեում, իսկ իտալերեն տեքստը՝ 30 րոպեում:

Թարգմանիչներ/ Լեզուներ	Ֆրանսերեն	Իտալերեն
Հասմիկ	30	60
Լիլիթ	60	30

Ենթադրենք երկուսն էլ պետք է թարգմանեն 5 էջանոց ֆրանսերեն և 5 էջանոց իտալերեն տեքստեր: Իր սեփական ուժերին հիմնվելով՝ և՛ Հասմիկը, և՛ Լիլիթը կավարտեն աշխատանքը 90 րոպեում: Սակայն եթե նրանք փոխանակվեն պարտավորություններով, ապա կարող են զգալիորեն կրճատել աշխատելու ժամանակը (ենթադրում ենք, որ տեքստի բարդությունը և թարգմանության որակը նույնն են):

Հասմիկն ավելի արդյունավետ է ֆրանսերենից թարգմանության գործում: Նա ֆրանսերեն 5 էջանոց 2 տեքստը կթարգմանի յուրաքանչյուրի վրա ծախսելով 30 րոպե: Լիլիթն իր հերթին ավելի արդյունավետ է իտալերենից թարգմանության գործում: Նա կթարգմանի իտալերեն տեքստերը 1 ժամում: Ինչպես տեսնում ենք, երկու կողմերն էլ փոխանակման արդյունքում շահեցին՝ խնայելով 30 րոպե աշխատաժամանակ: